ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
22.06.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

«22» հունիսի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Զենոն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Խլղաթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության ապրիլի 26-ի թիվ 509-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 22.06.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2018թ. վճարման ժամանակացույցը համաձայն հավելվածի (կցվում է):

1.2 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2018 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 11 733 810 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր տաս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝

Մ-1, Երևան-Աշտարակ-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների համար 4 315 014 (չորս միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար տասնչորս) ՀՀ դրամ,

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների համար 7 418 796 (յոթ միլիոն չորս հարյուր տասնութ հազար յոթ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 900011012136

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Զենոն» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Գայի պողոտա 52,բն19
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00882484
ՀՀ 2470103058830000

/ստորագրություն/

Հաստատված է
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ գնման պայմանագրի
«-----» հունիսի 2018թ. կնքված
թիվ 1 Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45231176/2	*Մ-1, Երևան-Աշտարակ-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքներ:*	-	-	-	-	-	-	-	-	-	4 315 014	4 315 014	4 315 014	4 315 014
2	45231176/2	*Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքներ:*	-	-	-	-	-	-	-	-	-	7 418 796	7 418 796	7 418 796	7 418 796

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գանձարանային վարչություն
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 90001012136
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Զենոն» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Գայի պողոտա 52,բն19
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00882484
ՀՀ 2470103058830000
/ստորագրություն/

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ

ք.Երևան «22» հունիսի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Զենոն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Խլղաթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված Մ-1, Երևան-Աշտարակ-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի և Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհների արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի 2018թ համար գինը կազմում է 46 935 240 (քառասունվեց միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ, որից 7 822 540 (յոթ միլիոն ութ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 17 260 056 (տասնյոթ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար հիսունվեց) ՀՀ դրամ՝ որից 2 876 676 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին՝ 29 675 184 (քսանինը միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար մեկ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ՝ որից 4 945 864 (չորս միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4.1.1 2019թ և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

4.1.2 Սույն պայմանագրով սահմանված դեկտեմբերի 20-ից դեկտեմբերի 31-ը կատարված աշխատանքների համար վճարումները կիրականացվեն նշված աշխատանքների համար հաջորդ տարի հատկացված միջոցների հաշվին:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

1 Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
ՀԾ 90001101213
Ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Զենոն» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Գայի պողոտա 52,բն19
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00882484
ՀՀ 24701030588300000
Ստորագրություն/

Հավելված թիվ 1
« » մայիսի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանման պահպանման աշխատանքների

Ի. Տեխնիկական պահանջներ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Աշխատանքի անվանումը - Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքներ

1.2. Նշանակությունը (խնդիրը) - Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանում

1.3. Հիմքը - Անվտանգության ապահովում

1.4. Ֆինանսավորման աղբյուրը - Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

1.5. Աշխատանքի կատարման ժամկետը - 2018թ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2023թ.- ի դեկտեմբերի 20-ը

1.6. Պատվիրատու - ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանման հիմնական խնդիրն է՝ մշտապես ապահովել արտաքին լուսավորությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

2. Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանման հիմնական սկզբունքն է՝ արտաքին լուսավորության վնասվածքների առաջացման կանխարգելումը, վթարների հետևանքով առաջացած վնասվածքների վերացումը, և ընթացիկ խնամքը:

3. Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանման հիմնական տեխնիկական պահանջները, որոնք պարտադիր են լուսավորության համակարգի պահպանման կապալառու կազմակերպությունների (այսուհետ՝ կապալառու) կողմից կատարման համար, հետևյալն են՝

<u>1) Զննումների և դիտարկումների պարբերական իրականացում</u>: Զննումները և դիտարկումները պետք է կատարվեն կապալառուի կողմից պարբերաբար՝ շաբաթը մեկ անգամ: Կապալառուն պարտավոր է գրանցումներ կատարել արտաքին լուսավորության պահպանման մատյանում, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ զննման արդյունքում հայտնաբերված անսարքությունները կամ թերությունները վերացնելու ուղղությամբ, երթևեկության անվտանգությանը վտանգ սպառնալու կամ արտակարգ իրավիճակների դեպքում, շտապ (մեկ ժամվա ընթացքում) զեկուցել պատվիրատուին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

<u>2) Հսկողության ապահովում</u>: Հսկողությունն իրականացնում է կապալառուն՝ առնվազն շաբաթական մեկ անգամ: Արդյունքները և հանձնարարականները (ներառյալ կատարման ժամկետները) գրանցում է կապալառուի արտաքին լուսավորության պահպանման մատյանում ու ստորագրում է:

Իրականացվող զննումների և հսկողության ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձվի արտաքին լուսավորության տրանսֆորմատորային ենթակայանների, լուսատուների, հենասյուների համապատասխանությանը գործող տեխնիկական նորմաներին: Զննման ժամանակ անհրաժեշտ է պիկետաժավորել և քարտեզագրել առկա բոլոր թերությունները:

<u>3) Խնամքի և ընթացիկ նորոգման ապահովում</u>: Արտաքին լուսավորության կոնստրուկտիվ տարրերի ընթացիկ նորոգման և խնամքի աշխատանքների հիմնական նպատակն է՝ կանխել դրանց ժամանակից շուտ մաշվածությունը և շարքից դուրս գալը: Այդ նպատակով կապալառուն պարտավոր է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ վերացնելով վնասվածքներն ու անսարքությունները:

Որպես խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ, կապալառուն պարտավոր է իրականացնել.

- Հայաստանի էլեկտրական ցանցերի կողմից սնուցվող KTPN-63/0.4 կՎ հզորության թվով 8 հատ, KTPN-40/0.4 կՎ հզորության թվով 1 հատ, KTPN-25/0.4 կՎ հզորության թվով 2 հատ ենթակայանների սպասարկման աշխատանքներ: Յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ կատարել տրանսֆորմատորների միջավայրի զննում, ստուգել բարձր և ցածր հոսանքալարերի միացումների հուսալիությունը, հաճախակի ստուգել լարման արժեքները, անհրաժեշտության դեպքում իրականացնել փոխարինում:
- Ենթակայաններին կից թվով 11, ինչպես նաև առանձին թվով 3 հատ բաշխիչ վահանների սպասարկման աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում իրականացնել փոխարինում՝ մուտքային քառաբևեռ բաժանիչների, մագնիսական թողարկիչների, գեր լարման սահմանափակիչների, բաժանիչ ապահովիչների, եռաֆազ և միաֆազ ավտոմատ անջատիչների, ծրագրավորվող ժամանակային ռելեների, փաթեթային փոխանջատիչների և այլն:
- Իրականացնել ենթակայանների ցանկապատերի (4x4մ) արտաքին վնասվածքների վերացում, անհրաժեշտության դեպքում իրականացնել փոխարինում:
- Իրականացնել ենթակայանների տարածքում հնարավոր հողային իջեցումների վերականգնում:
- Իրականացնել էլ. մալուխների, հողանցման համակարգի, պոլիվինիլքլորիդային խողովակների և դիտահորերի պարբերական ստուգումներ, անհրաժեշտության դեպքում իրականացնել փոխարինում:
- Իրականացնել բարձր լարման հատվածի հաճախակի զննումներ, անհրաժեշտության դեպքում փոխարինելով խզիչները, մեկուսիչները և լարերը:
- Կատարել ժամանակի ռելեների թվով (13 հատ) ծրագրավորման հաճախակի փոփոխություն՝ համաձայն ՀՀ Կառավարության որոշման գրաֆիկի, պահպանելով լուսավորության համապատասխան մակարդակը՝ երթևեկության անվտանգության ապահովման նպատակով:
  - *Ընդհանուր ժամային կողմնորոշիչ է հանդիսանում բնական ցերեկային լույսի առնվազն 20Lux ցուցանիշը, որի նվազման դեպքում լուսավորության համակարգը պետք է գործի հետևյալ սեզոնային գրաֆիկով.*

    Ձմեռ (նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար, փետրվար) – 18:00 – 24:00
    Գարուն/Աշուն (մարտ, ապրիլ, մայիս, սեպտեմբեր, հոկտեմբեր) – 19:00 – 24:00
    Ամառ (հունիս, հուլիս, օգոստոս) – 20:00 – 24:00
    Վերոնշյալ գրաֆիկին զուգահեռ լուսավորության համակարգի աշխատանքը պետք է համաձայնեցնել Եր Քաղ Լույս ՓԲԸ-ի հետ՝ Երևանի քաղաքային լուսավորության հետ հատման կետերում համաժամանակ միացում/անջատում ապահովելու նպատակով:

- Կատարել լուսավորության հենասյուների հաճախակի զննումներ, ստուգել և ամրացնել պտուտակների հիմքերը և հեղյուսները: Վերականգնել ավտովթարներից և այլ արտաքին ազդակներից վնասված հատվածները: Անհրաժեշտության դեպքում փոխարինել հենասյունը, լուսատուն, հենասյան բաշխիչ վահանի ավտոմատ անջատիչները և մալուխները, ապահովել հողանցման համակարգի անխափան աշխատանքը:
- Կատարել լուսատուների սպասարկում՝ արտադրողի կողմից տրված տեխնիկական սպասարկման ուղեցույցի համաձայն:
- Իրականացնել լուսատուների աշխատանքի պարբերական վերահսկողություն, խափանված լուսատուների առկայության դեպքում իրականացնել փոխարինում:
- Հայաստանի էլեկտրական ցանցերում գրանցվել որպես բաժանորդ և վճարել Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի ծախսած էլեկտրաէներգիայի ամսեկան վարձավճարը:
- Ինքնուրույնաբար կրել բոլոր ծախսերը՝ կապված լուսավորման համակարգի բոլոր բաղկացուցիչների վնասման, խափանման, հափշտակության և/կամ կորստի դեպքերում վերականգնողական աշխատանքների հետ, անկախ նման դեպքերի առաջացման հանգամանքներից և պայմաններից:

4) Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանման կապալառու կազմակերպությունը պարտավոր է վարել արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների մատյան, որը պետք է լինի կարված, համարակալված էջերով և պատվիրատուի կողմից կնքված: Մատյանը պետք է պահվի կապալառու կազմակերպության գրասենյակում և տրամադրվի տվյալ ավտոմոբիլային ճանապարհի պետական կառավարման մարմնի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության լիազոր ներկայացուցիչներին՝ արտաքին լուսավորության համակարգի պահպանման վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ գրանցելու նպատակով: Յուրաքանչյուր քաղաքացի իրավասու է տվյալ ավտոմոբիլային

ճանապարհների պետական կառավարման մարմնին և/կամ տվյալ արտաքին լուսավորության համակարգի պահպանումը իրականացնող կազմակերպությանն իրազեկել արտաքին լուսավորության համակարգի վիճակի մասին:

5) արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքները ընդունվում են հետևյալ կերպ՝

<u>ա) Պահպանման միջանկյալ դիտարկում</u>

Արտաքին լուսավորության համակարգի պահպանման միջանկյալ դիտարկումներն իրականացվում են յուրաքանչյուր ամիս՝ առնվազն երեք անգամ: Միջանկյալ դիտարկման ժամանակ ստուգվում է արտաքին լուսավորության համակարգի պահպանման համապատասխանությունը պահպանման պահանջներին և առկա թերություններն արձանագրվում են արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների միջանկյալ դիտարկման ամփոփագրում: Արձանագրված թերությունները և դրանց վերացման ժամկետները գրանցվում են նաև արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների մատյանում: Արտաքին լուսավորության համակարգի պահպանման միջանկյալ դիտարկման ամփոփագրում և արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների մատյանում գրանցումների հիման վրա կատարվում է արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը:

<u>բ) Արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունում</u>

Արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը իրականացվում է մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա յոթերորդ աշխատանքային օրը: Հիմնվելով միջանկյալ դիտարկումների արդյունքների վրա, կատարվում է արտաքին լուսավորության համակարգի պահպանման գնահատումը՝ արդյունքները ձևակերպելով արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների ընդունման ամսեկան ամփոփագրում :

6. Պատվիրատուի պասխանատուի կողմից արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքները ընդունվում և տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի կողմից վճարվում են ամբողջությամբ, եթե ապահովված են պահպանման պահանջները:

7. Պատվիրատուի պասխանատուի կողմից արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքները ընդունվում և տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի կողմից վճարվում են մասնակիորեն՝ աղյուսակ N1-ում բերված տոկոսաչափերով նվազեցումով, եթե պահպանման պահանջները լիարժեք ապահովված չեն:

Աղյուսակ N 1. Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանման պահանջների ապահովման արժեքների տոկոսային հարաբերակցությունը

Արտաքին լուսավորության համակարգի կոնստրուկտիվ տարրեր, թերություններ և դրանց վերացման պահանջվող առավելագույն ժամկետ		Թերությունը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում արտաքին լուսավորության համակարգի պահպանման արժեքից պակասեցվող %
1	Ենթակայանների ցանկապատերի (4x4մ) արտաքին վնասվածքների բացակայություն՝ ընդհանուր քանակից 5 % ավել (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	*15*
2	Ենթակայանների աշխատանքների խախտում (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	*15*
3	Բաշխիչ վահանների աշխատանքների խախտում (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	*20*
4	Ենթակայանների տարածքում հնարավոր հողային իջեցումների վերականգնում (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո ՝1 օր)	*10*
5	Էլ. մալուխների, հողանցման համակարգի, պոլիվինիլքլորիդային խողովակների և դիտահորերի թերությունների բացակայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո ՝5 օր)	*15*
6	Լուսատուների անհամապատասխանությունը նորմաներին՝ (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5 օր)	*10*

7	Հենապյուների անհամապատասխանությունը նորմաներին՝ (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5 օր)	*15*

II. Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը (2018թ.-ի համար)

(ՀՀ դրամ)

Չափ. համարը	Աշխատանքի անվանումը	Պահպանում			Ընդամենը
		կմ	Միավորի գինը	Գումար	
1	*Մ-1, Երևան-Աշտարակ-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքներ:*	11,4	1 514 040	17 260 056	17 260 056
2	*Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքներ:*	19,6	1 514 040	29 675 184	29 675 184

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գանձարանային վարչություն
ՀՎՀՀ 02565518
90001072136
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Զենոն» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Գայի պողոտա 52,բն19
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00882484
ՀՀ 24701030058830000
/ստորագրություն/

Հավելված թիվ 2
« » մայիսի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231176/2	*Մ-1, Երևան-Աշտարակ-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքներ:*													
2	45231176/2	*Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքներ:*													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
900011012136
Տնօրեն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Զենոն» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Գայի պողոտա 52,բն19
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00882484
ՀՀ 24701030588300000
«ZENON»
/տնօրեն/
Կ.Տ.
00882484

Հավելված թիվ 3
« » մայիսի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
_____
հվհհ _____

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և
_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » մայիսի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«_____» մայիսի 2018թ.

«Զենոն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Խլղաթյանի (անձ. 53 0478559, տրված 07.11.2013թ.-ին, ՌԴ ԱԳՆ 37401-ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Զենոն» ՍՊԸ
ընկերության անվանումը

ՀՀ ք.Երևան, Գայի պողոտա 5շ, բն.19
ընկերության հասցեն

«Ադոշինբանկ» ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2470103058830000
ընկերության բանկային հաշվեհամարը

00882484
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Արմեն Խլղաթյան
ընկերության ղեկավարի անունը, ազգանունը և պաշտոնը

կՏ

«ԶԵՆՈՆ»
"ZENON"
00882484

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Զենոն» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 2470103058830000

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 00882484

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565518

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900005000758

12.Գումարը թվերով և բառերով՝ 4 693 524 (չորս միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր քսանչորս)

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ (AMD)

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.